

† 2. ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Նոյեմբերի 9-ին, Վենետիկի ս. Ղազար կղզում, վախճանուեց Հ. Ղևոնդ Ալիշանը, հայոց գրականութեան ութսունամեայ Նահապետը: Աշխարհիս ամեն ծայրերում ցրուած հայ ժողովրդի կողմից արտայայտուած խոր վիշտը ամենալաւ ապացոյց է թէ սրբան թանգ էր և հարազատ Ղևոնդ Ալիշանը հայի սրտին: Իբրև բանաստեղծ և անխոնջ գիտնական Ալիշանը իր անձի մէջ ամփոփում էր Մխիթարեան միաբանութեան ամենազինէ ձգտումները. նա իր գրուածքներով բնորոշում էր Մխիթարի հիմնած ուխտի ամբողջ աշխարհայեցողութիւնը: Ղևոնդ Ալիշանը սկիզբիցիւ դմով զինուած մի գիտնական չէր, այլ իր առարկան իղէլականացնող մի բանաստեղծ: Նրա հոգին սաւառնում էր աւելի Հայաստանի անցեալում, քան հետաքրքրւում ներկայ իրականութեամբ, նրա տխրամած ոգևորութիւնը լքցնւում էր Հին Հայաստանի փառաւոր աւերակների և հայ քաջագունների պանծալի գործերի նկարագրութեամբ: Ալիշանը մի անջատուած սիրահար էր «Հայաստան աշխարհի», որի կարօտը նրա գրած ամեն մի տողից է լսւում: Այդ հեռու Հայրենիքը նա սիրում էր իր հաւատացող հոգու ամբողջ կարողութեամբ մինչև իր կեանքի վերջին շունչը: Ալիշանի սիրոյ մեծութիւնը կարելի է չափել այն հսկայական, հոյակապ աշխատութիւններով, որ իբրև ժառանգութիւն թողնում է այդ հանճարեղ զաւակը իրան ծնող ազգին:

Հայութեան այդ մեծ կորուստի առիթով «Մուրճի» խմբագրութիւնը ժամանակին իր խոր ցաւակցութիւնը հեռագրով յայտնեց Մխիթարեան միաբանութեան: Մեր խմբագրութիւնը յաջորդ համարներից մէկում, կը նուիրի Հ. Ղևոնդ Ալիշանին առանձին ուսումնասիրութիւն: